ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ԾՐԱԳԻՐ

«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»

(իրականացվում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ)

ք.Երևան 18.04.2016թ.

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատը **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի** աջակցությամբ իրականացնում է «*Անվճար իրավաբանական խորհրդատվություն*» դրամաշնորհային ծրագիրը, որն ուղղված է հասարակական տարբեր խոցելի շերտերի իրավաբանական օգնության ապահովմանը: ք.Երևան

Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).

ա) անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում ***(բաղադրիչ 1),***

բ) անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում ***(բաղադրիչ 2),***

գ) անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին ***(բաղադրիչ 3):***

Նախատեսվում է ծրագրի բոլոր բաղադրիչները (իրավաբանական խորհրդատվությունը) սկսել 2016 թվականի մայիսի երրորդ շաբաթվանից:

Ծրագրի բաղադրիչներից յուրաքանչյուրի բովանդակությունը տե՛ս ստորև:

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՂԱԴՐԻՉ 1.

Ծրագրով նախատեսվում է անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցել Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի տարբեր համայնքներում բնակվող քաղաքացիների համար՝ այցելություններ կազմակերպելով Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր՝ ծրագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան (տե՛ս ստորև, աղյուսակ 1)։ Մարզային այցելությունների ժամանակ քաղաքացիների հետ փաստաբանների հանդիպումները կազմակերպվելու են ՀՀ փաստաբանների պալատի համակարգողների գրասենյակներում կամ ծրագրի աշխատակազմի կողմից համաձայնեցված այլ վայրում։ Յուրաքանչյուր այցելություն, որպես կանոն, կազմակերպվելու է 6 (վեց) ժամ տևողությամբ։ Ծրագրի ժամանակահատվածում խորհրդատվությունների մատուցումը նախատեսվում է հնարավորության դեպքում կազմակերպել նաև հեռախոսով և էլեկտրոնային փոստի միջոցով։ Երևանից դեպի մարզեր այցելություններն իրականացվելու է ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով։

Բաղադրիչ 1, աղյուսակ 1.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Անվճար իրավաբանական օգնություն մարզերում

No	Մարզ (համայնք)	Ամսաթիվ	Փաստաբանների խմբեր
1.	**Արարատի մարզ** 1. Արտաշատ 2. Արարատ 3. Մասիս 4. Վեդի	**Մայիս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 1)**
2.	**Արմավիրի մարզ** 5. Արմավիր 6. Վաղարշապատ 7. Մեծամոր	**Հունիս** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 2)**

3.	**Արագածոտնի մարզ** 8. Աշտարակ 9. Թալին 10. Ապարան	**Հունիս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 3)**
4.	**Կոտայքի մարզ** 11. Աբովյան 12. Հրազդան 13. Չարենցավան 14. Ծաղկաձոր	**Հուլիս** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 4)**
5.	**Սյունիքի մարզ** 15. Սիսիան 16. Գորիս 17. Կապան 18. Մեղրի	**Հուլիս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 5)**
6.	**Տավուշի մարզ** 19. Դիլիջան 20. Իջևան 21. Բերդ 22. Նոյեմբերյան	**Օգոստոս** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 6)**
7.	**Վայոց Ձորի մարզ** 23. Ջերմուկ 24. Եղեգնաձոր 25. Վայք	**Օգոստոս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 7)**
8.	**Լոռու մարզ** 26. Վանաձոր 27. Ստեփանավան 28. Սպիտակ	**Սեպտեմբեր** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 8)**
9.	**Շիրակի մարզ** 29. Գյումրի 30. Ախուրյան 31. Արթիկ 32. Մարալիկ	**Սեպտեմբեր** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 9)**
10.	**Գեղարքունիքի մարզ** 33. Սևան 34. գավառ 35. Մարտունի 36. Վարդենիս	**Հոկտեմբեր** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 10)**

ԲԱՂԱԴՐԻՉ 2.

Ծրագրով նախատեսվում է անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցել քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) ազատազրկման մեջ գտնվող անձանց համար՝ այցելություններ կազմակերպելով քրեակատարողական հիմնարկներ՝ ծրագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան (տե՛ս ստորև, աղյուսակ 2)։ ՔԿՀ-ներ յուրաքանչյուր այցելություն կազմակերպվելու է 6 ժամ տևողությամբ։

Երևանից դեպի ՔԿՀ-ներ այցելություններն իրականացվելու է ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով։

Բաղադրիչ 2, աղյուսակ 2.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Անվճար իրավաբանական օգնություն
քրեակատարողական հիմնարկներում

No	Քրեակատարողական հիմնարկ (ՔԿՀ)	Ամսաթիվ	Փաստաբանների խմբեր
1.	**«Նուբարաշեն» ՔԿՀ** հասցե՝ **ք. Երևան,** Նուբարաշենի խճուղի 2	**Մայիս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 1)**
2.	**«Արմավիր» ՔԿՀ** հասցե՝ **Արմավիրի մարզ,** ք. Էջմիածին, Չոբանքարա	**Հունիս** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 2)**
3.	**«Կոշ» ՔԿՀ** հասցե՝ **Արագածոտնի մարզ,** գ. Կոշ	**Հունիս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 3)**
4.	**«Աբովյան» ՔԿՀ** հասցե՝ **Կոտայքի մարզ,** ք. Աբովյան	**Հուլիս** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 4)**
5.	**«Գորիս» ՔԿՀ** հասցե՝ **Սյունիքի մարզ,** ք. Գորիս, Նարեկացու 5	**Հուլիս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 5)**

6.	**«Վարդաշեն» ՔԿՀ** հասցե՝ **ք. Երևան,** Նուբարաշենի խճուղի 7	**Օգոստոս** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 6)**
7.	**«Սևան» ՔԿՀ** հասցե՝ **Կոտայքի մարզ,** ք. Հրազդան	**Օգոստոս** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 7)**
8.	**«Վանաձոր» ՔԿՀ** հասցե՝ **Լոռու մարզ,** ք. Վանաձոր, Տավրոսի 20	**Սեպտեմբեր** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 8)**
9.	**«Արթիկ» ՔԿՀ** հասցե՝ **Շիրակի մարզ,** գ. Հառիճ	**Սեպտեմբեր** *3-րդ շաբաթ* *4-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 9)**
10.	**«Հրազդան» ՔԿՀ** հասցե՝ **Կոտայքի մարզ,** ք. Հրազդան, Միկրոշրջան 45	**Հոկտեմբեր** *1-ին շաբաթ* *2-րդ շաբաթ*	3 փաստաբան **(խումբ 10)**

ԲԱՂԱԴՐԻՉ 3.

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցել վարորդներին՝ կապված ճանապարհային ոստիկանության կողմից վերջիններիս վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքերի իրավաչափության հետ: Իրավաբանական օգնությունը վարորդներին կտրամադրվի սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ շաբաթական մեկ օր պարբերականությամբ յուրաքանչյուր անգամ 6 ժամ տևողությամբ (տե՛ս ստորև, աղյուսակ 3): Անհրաժեշտության դեպքում վարորդներին իրավաբանական օգնություն տրամադրելու համար փաստաբաններից կարող է պահանջվել նաև այցելելու ՀՀ ճանապարհային ոստիկանություն կամ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն, կազմել դիմումներ, վարչական բողոքներ կամ հայցադիմումներ): Ծրագրի ժամանակահատվածում խորհրդատվությունների մատուցումը նախատեսվում է հնարավորության դեպքում կազմակերպել նաև հեռախոսով և էլեկտրոնային փոստի միջոցով:

Բաղադրիչ 3, աղյուսակ 3

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Անվճար իրավաբանական օգնություն վարորդներին

No	Ամիս	Շաբաթ
1.	Մայիս	3-րդ շաբաթ 4-րդ շաբաթ
2.	Հունիս	1-ին շաբաթ 2-րդ շաբաթ 3-րդ շաբաթ 4-րդ շաբաթ
3.	Հուլիս	1-ին շաբաթ 2-րդ շաբաթ 3-րդ շաբաթ 4-րդ շաբաթ
4.	Օգոստոս	1-ին շաբաթ 2-րդ շաբաթ 3-րդ շաբաթ 4-րդ շաբաթ
5.	Սեպտեմբեր	1-ին շաբաթ 2-րդ շաբաթ 3-րդ շաբաթ 4-րդ շաբաթ
6.	Հոկտեմբեր	1-ին շաբաթ 2-րդ շաբաթ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

Բաղադրիչ 1. Մարզերում անվճար իրավաբանական խորհրդատվությունը կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր մարզի համար ձևավորվելու են փաստաբանների առանձին խմբեր (10 մարզ – 10 խումբ սկզբունքով), որոնցից յուրաքանչյուրի մեջ ընդգրկվելու են 3-ական փաստաբաններ՝ 2-ը Երևանից, 1-ը տվյալ մարզից: Փաստաբանների այցելությունները մարզեր և համայնքներ իրականացվելու է ծրագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան (տե՛ս վերևում, աղյուսակ 1):

Բաղադրիչ 2. Քրեակատարողական հիմնարկներում անվճար իրավաբանական խորհրդատվությունը կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր ՔԿՀ-ի համար ձևավորվելու են փաստաբանների առանձին խմբեր (10 ՔԿՀ – 10 խումբ սկզբունքով), որոնցից յուրաքանչյուրի մեջ ընդգրկվելու են 3-ական փաստաբաններ՝ 2-ը Երևանից, 1-ը տվյալ մարզից (բացառությամբ «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների, որտեղ ընդգրկվելու են 3-ական փաստաբաններ Երևանից)։ Փաստաբանների այցելությունները ՔԿՀ-ներ իրականացվելու է ծրագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան (տե՛ս վերևում, աղյուսակ 2)։

Բաղադրիչ 3. Վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար յուրաքանչյուր ամիս ձևավորվելու են 3 փաստաբանից կազմված փաստաբանների առանձին խմբեր (5 ամիս - 5 խումբ սկզբունքով), որոնք նախատեսված ժամանակացույցին համապատասխան, շաբաթական մեկ օր պարբերականությամբ, յուրաքանչյուր օր 6 ժամ տևողությամբ իրավաբանական խորհրդատվություն կմատուցեն վարորդներին ՀՀ փաստաբանների պալատում, անհրաժեշտության դեպքում ՀՀ ՃՈ-ում կամ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ-ում։

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Փաստաբանների ընդգրկումը ծրագրում իրականացվելու է մրցութային հիմունքներով։

Յուրաքանչյուր հաջորդ խմբի փաստաբանների ընտրության մրցույթը նախատեսվում է կազմակերպել այդ խմբի այցելությունների համար նախատեսված ամսվա կամ այդ ամսվան նախորդող ամսվա ընթացքում։

Մրցույթը կազմակերպվելու է երկու փուլերով՝ հայտերի փաստաթղթային գնահատում և հարցազրույց։

Փաստաթղթային գնահատման փուլում հայտարարված մրցույթի պահանջներին համապատասխան ներկայացված դիմում-հայտերի, ինքնակենսագրությունների և այլ փաստաթղթերի հիման վրա կգնահատվի փաստաբանի փորձառությունը, մասնագիտական փորձը, հասարակական և իրավապաշտպան գործունեության բնագավառում ակտիվությունը, իրավունքի համապատասխան բնագավառում մասնագիտացումը, մասնագիտական այլ որակները։ Նշված չափանիշներին փաստաբանի համապատասխանությունը գնահատելու համար դիմողից կարող է պահանջվել ներկայացնելու ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, երաշխավորական նամակ, այլ փաստաթղթեր։

Բաղադրիչ 1-ին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող փաստաբանները, որոնք մասնագիտացված են քաղաքացիական իրավունքի բնագավառում:

Բաղադրիչ 2-ին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող փաստաբանները, որոնք մասնագիտացված են քրեական իրավունքի բնագավառում:

Բաղադրիչ 3-ին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող փաստաբանները, որոնք մասնագիտացված են վարչական իրավունքի բնագավառում:

Ներկայացված դիմում-հայտերը գնահատվելու է ՀՀ փաստաբանների պալատում ստեղծված հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ են մտնում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալը, ծրագրի համակարգողը, ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներկայացուցիչը:

Մրցույթի առաջին՝ փաստաթղթային գնահատման փուլում հանձնաժողովի կողմից ընտրված դիմողները կհրավիրվեն բանավոր հարցազրույցի (երկրորդ փուլ): Հարցազրույցի փուլում հանձնաժողովը նույն կազմով իր որոշմամբ սահմանված կարգով կանցկացնի հարցազրույց դիմող փաստաբանների հետ և հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը կընտրի ծրագրին մասնակցող փաստաբաններին: Նախապատվությունը կտրվի այն փաստաբաններին, որոնք որպես կատարող նախկինում չեն մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի համանման այլ ծրագրերին:

Հարցազրույցի արդյունքում ընտրված փաստաբաններին կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր ծրագրին մասնակցելու համար:

Սահմանափակումներ

1. Ծրագրի որևէ խմբում ընդգրկված փաստաբանը չի կարող հետագայում մասնակցել մեկ այլ խմբում ընդգրկվելու համար հայտարարված մրցույթին, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարված մրցույթին մասնակցելու համար չեն ներկայացվել դիմում-հայտեր կամ առկա է մրցույթ կազմակերպելու այլ անհնարինություն: Անհրաժեշտության դեպքում սակավաթիվ փաստաբաններ ունեցող մարզերի փաստաբանների մրցույթին կարող են հրավիրվել մասնակցելու նաև հարակից մարզերի փաստաբանները:
2. Որևէ մրցույթին մասնակցած փաստաբանի չընդգրկվելը (չընտրվելը) ծրագրում արգելք չէ հաջորդ մրցույթներին մասնակցելու համար:
3. Մրցույթին մասնակցելու իրավունքը կսահմանափակվի նաև

հանրային պաշտպանների համար, բացառությամբ այն մարզերի հանրային պաշտպանների, որտեղ փաստաբանների թիվը խիստ սակավ է, ինչի պատճառով մրցույթին մասնակցելու համար չեն ներկայացվել դիմում-հայտեր կամ առկա է առանց հանրային պաշտպանի ներգրավման մրցույթ կազմակերպելու այլ անհնարինություն:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ, ՕՐԱՊԱՀԻԿ ԵՎ ԳԻՇԵՐԱԿԱՑ

Ծրագրին մասնակցող փաստաբանների համար նախատեսված է վարձատրություն յուրաքանչյուր այցելության համար: Յուրաքանչյուր փաստաբանի վարձատրությունը կիրականացվի ըստ համապատասխան խմբում այցելությունների թվի: Յուրաքանչյուր խմբի այցելությունների քանակը նախատեսված է ծրագրի ժամանակացույցով:

Մարզեր և մարզերում գտնվող քրեակատարողական հիմնարկներ այցելող փաստաբաններին կտրամադրվի նաև օրապահիկ:

Սյունիքի մարզ՝ Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի քաղաքներ, Տավուշի մարզ՝ Բերդ, Նոյեմբերյան քաղաքներ և «Գորիս» ՔԿՀ այցելությունները նախատեսվում է կազմակերպել գիշերակացով՝ համապատասխան ծախսերի փոխհատուցմամբ:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Ծրագրի համակարգող՝
Լյուդվիկ Դավթյան

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու
Հեռ.՝ 091 066 880, 060 60 50 50
էլ. փոստ՝ lyudvik.davtyan@gmail.com